ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 8

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետ Գ. Միրիջանյանի մոտ 2018 թվականի հուլիսի 30-ին կայացած խորհրդակցության

Մասնակցությամբ՝

ՀՀ Արմավիրի մարզպետի տեղակալներ ***Գ. Գաբրիելյանի***
Կ.Գրիգորյանի
Ա.Ղուկասյանի

ՀՀ Արմավիրի մարզպետարանի
աշխատակազմի ղեկավարի
պաշտոնակատար ***Ա.Հովհաննիսյանի***

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի
կառուցվածքային ղեկավարների

ՀՀ Արմավիրի մարզպետի օգնականների և խորհրդականների

Օրակարգում

1. ***ՀՀ Արմավիրի մարզում առկա հրատապ խնդիրների քննարկում:***

/ՀՀ Արմավիրի մարզպետ – Գ.Միրիջանյան/

Քննարկվեցին՝

Հարց 1.ՀՀ Արմավիրի մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման վերաբերյալ վերահսկողություն իրականացնելու և համապատասխան շրջաբերական գրություն պատրաստելու վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ա.Հովհաննիսյանին և ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Վ.Մկրտչյանին՝ պատրաստել շրջաբերական գրություն ուղղված ՀՀ Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին՝ համայնքների բյուջեների կատարման և սեփական եկամուտների մուտքերի ապահովման վերաբերյալ և զեկուցել մարզպետին:

/Ժամկետ 06. 07.2018թ/

Հարց 2.Համայնքներում վարձակալական հիմունքներով տրամադրված տարածքների վճարումների վերաբերյալ:

Հանձնարարական՝

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Ա.Հովհաննիսյանին, ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման

վարչության պետ Վ.Մկրտչյանին,իրավաբանական բաժնի պետի պաշտոնակատար Լ.Հարությունյանին՝մշակել գործընթաց համայնքներում վարձակալական հիմունքներով տրամադրված տարածքների վճարումները չկատարած անձանց հետ պայմանագրերը խզելու վերաբերյալ և զեկուցել ՀՀ Արմավիրի մարզպետին:
(Ժամկետ 06. 07.2018թ)

Հարց 3 .ՀՀ Արմավիրի մարզի Գայ համայնքում գտնվող գյուղատնտեսական շուկայի տնօրենի հարկային պարտավորությունների պարտադիր կատարման վերաբերյալ ավագանու նիստով կայացվելիք համապատասխան որոշման նածագծի վերաբերյալ:

Հանձնարարական

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետ Ա.Դարբինյանին՝ուսումնասիրել ՀՀ Արմավիրի մարզի Գայ համայնքում գտնվող գյուղատնտեսական շուկայի տնօրենի հարկային պարտավորությունների պարտադիր կատարման վերաբերյալ ավագանու նիստով կայացվելիք համապատասխան որոշման նախագիծը և զեկուցել մարզպետին:
(Ժամկետ 06. 07.2018թ.)

Հարց 4. ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում իրականացվող իրավական և մասնագիտական հսկողության արդյունքների ամփոփման և ՀՀ Արմավիրի մարզպետարանի և մարզային աշխատակազմի և մարզային ենթակայության կառույցների թափուր հաստիքների համալրման մրցույթների վերաբերյալ ;
Հանձնարարական

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի լրատվության և հասարակայնության հետ կապերի բաժնի պետ Հ.Վարդանյանին
ՀՀ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայքում տեղադրել ՀՀ Արմավիրի մարզի համայնքներում իրականացվող իրավական և մասնագիտական հսկկողության արդյունքների արձանագրությունները և ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի թափուր հաստիքների մրցույթների վերաբերյալ հայտարարությունները:
/**Ժամկետ 06 .07.2018թ.**/

Հարց 5. ՀՀ Արմավիրի մարզի Արաքս/Արմ/,Հուշակերտ և Մրգաշատ միջն.դպրոցների զուգարանների վերանորոգման վերաբերյալ:

Հանձնարարական

ՀՀ Արմավիրի մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչության պետի պաշտոնակատար Հ.Կուրղինյանին՝

ուսումնասիրել և ներկայացնել Արաքսի/Արմ/, Հուշակերտի և Մրգաշատի միջն. դպրոցների զուգարանների վերանորոգման համար անհրաժեշտ ֆինանսական հաշվարկները և զեկուցել մարզպետին:

/**ժամկետ 06.08.2018թ/**

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ՝

Недействительная подпись

X

VERIFIED OCSP 04.08.2018 13:23:41 GMT+4

Подписано: MIRIJANYAN GAGIK 2608810403

Գ. ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Արծ .
ընդհանուր բաժնի պետ Մ.Առուշանյան